

**2015 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐ
ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆԸ ՊԵՏԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ**

1. ՆԱԽԱԲԱՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում կայուն տնտեսական աճի ապահովման քաղաքականության համատեքստում փոքր և միջին ձեռնարկատիրության (այսուհետ՝ ՓՄՁ) զարգացումը կոչված է նպաստելու երկրի տնտեսական աճի կայունությանը՝ տնտեսությանը հաղորդելով նորարարական ուղղվածություն և ճկունություն:

Կարևորելով ՓՄՁ դերը երկրի տնտեսության զարգացման, զվաղվածության մակարդակի բարձրացման, բնակչության կենսամակարդակի բարձրացման, հասարակության միջին խավի ձևավորման, երկրում սոցիալական և քաղաքական կայունության ապահովման գործում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը շարունակական քայլեր է ձեռնարկում ՓՄՁ ոլորտի պետական աջակցության և զարգացման ուղղությամբ համապատասխան ծրագրերի իրականացմանը:

ՓՄՁ նշանակալի դեր է խաղում երկրի համախառն ներքին արդյունքի (այսուհետ՝ ՀՆԱ) ձևավորման և նոր աշխատատեղերի ստեղծման գործում: ՀՆԱ-ի մեջ ՓՄՁ ոլորտի մասնակցության 2013 թվականի ցուցանիշը կազմում է 34.4%՝ 2012 թվականի արձանագրված 33.6%-ի դիմաց: 2013 թվականի ընթացքում գործող ՓՄՁ սուբյեկտների թվաքանակը ավելացել է 54-ով:

Ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2014 թվականին, հետևողական աշխատանքներ են իրականացվում Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ՓՄՁ ոլորտի պետական աջակցության համապատասխան միջոցառումների իրականացման ուղղությամբ:

Իրականացման փուլում է ՓՄՁ պետական աջակցության 2014 թվականի ծրագիրը, որով նախատեսված ծրագրային միջոցառումների գերակշիռ մասը նպատակաուղղված է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջաններում սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտներին աջակցության ցուցաբերմանը և, ընդհանուր առմամբ, տնտեսական ու գործարար ակտիվության բարձրացմանը:

Տարեցտարի կայանում և ամրապնդվում է ՓՄՁ պետական աջակցության համակարգը, ընդլայնվում են ՓՄՁ սուբյեկտներին ցուցաբերվող տեխնիկական և ֆինանսական աջակցության ծավալներն ու աշխարհագրությունը, կատարելագործվում դրանց տրամադրման մեխանիզմները և ընթացակարգերը:

2. ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

ՓՄՁ պետական աջակցության 2015 թվականի ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) մշակման և իրականացման հիմքը «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքն է:

Ծրագրի մշակման համար հիմք են հանդիսացել նաև՝

1) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2002 թվականի հունվարի 29-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման քաղաքականության և ռազմավարության հիմնադրույթների մասին» N 7 որոշումը,

2) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի հոկտեմբերի 9-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012-2017թթ. գործունեության ծրագրի մասին» N 700-Ա որոշումը,

3) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 17-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2015-2017 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին» N 604-Ն որոշումը:

3. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԴՐԱ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ծրագրի հիմնական նպատակն է՝ ՓՄՁ զարգացմանը պետական աջակցության ցուցաբերումը, ինչը կնպաստի Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տնտեսական զարգացմանը և աճի կայուն տեմպերի ապահովմանը:

1) Ծրագրի նպատակներն են՝

ա. ՓՄՁ սուբյեկտների ֆինանսական և ներդրումային հնարավորությունների ընդլայնումը,

բ. ՓՄՁ սուբյեկտների նորարարական և արտաքին տնտեսական գործունեության ընդլայնումը,

գ. ՓՄՁ սուբյեկտների տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների, բիզնես ենթակառուցվածքների ծառայություններից օգտվելու հնարավորությունների ընդլայնումը,

դ. գործարար միջավայրի բարելավմանը զուգընթաց գործող և սկսնակ ՓՄՁ սուբյեկտների, մասնավորապես՝ կանանց և երիտասարդների համար ձեռներեցությամբ զբաղվելու հնարավորությունների ընդլայնումը՝ նախապատվությունը տալով զբոսաշրջության ոլորտում գործող, գյուղատնտեսական մթերքների արտադրությամբ, տեղական հումքի վերամշակմամբ զբաղվող, արտահանման ուղղվածություն ունեցող, ներմուծմանը փոխարինող տեղական արտադրատեսակներ արտադրող տնտեսավարող սուբյեկտներին,

ե. աջակցության նոր մեխանիզմների (մոտեցումների) ներդրումը:

2) Ծրագրի իրականացումից ակնկալվող արդյունքներն են՝

ա. երկրի ՀՆԱ-ում ՓՄՁ մասնաբաժնի հետագա ավելացումը,

բ. ՓՄՁ սուբյեկտների թվաքանակի ավելացումը, նոր աշխատատեղերի ստեղծումը:

4. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Ծրագրի իրականացման սկզբունքներն են՝

1) Ծրագրի իրականացման շրջանակներում նախապատվությունը կտրվի արտադրության ոլորտում ներքին ռեսուրսներ վերամշակող, նորարարություններ և ժամանակակից տեխնոլոգիաներ կիրառող, հեռանկարային և արտահանման ներուժ ունեցող ՓՄՁ սուբյեկտներին աջակցությանը, ինչպես նաև սկսնակ գործարարների ձեռներեցության զարգացմանը.

2) Ծրագրի իրականացման ընթացքում առաջնահերթությունը կտրվի Ստեփանակերտ քաղաքից դուրս՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջաններում, մասնավորապես գյուղական բնակավայրերում, գործող և սկսնակ ՓՄՁ սուբյեկտներին աջակցության ցուցաբերմանը.

3) Ծրագրի իրագործումը չի խախտի տնտեսական մրցակցությունը, քանի որ այն մեծամասամբ ուղղված կլինի ոչ ավանդական գործունեության տեսակների ձևավորմանը և տարածքային համաչափ զարգացման ապահովմանը.

4) Ծրագրի իրականացման ընթացքում, աջակցության նպատակայնության և հասցեականության ապահովման նպատակով, ծրագիրն իրականացնող հիմնական կառույցների կողմից կապահովվի աշխատանքների թափանցիկություն և հաշվետվողականություն:

5. ԾՐԱԳՐԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ

2015 թվականի համար նախատեսված ծրագրային միջոցառումների համակարգն ընդգրկում է ՓՄՁ զարգացմանը պետական աջակցության հետևյալ հիմնական ուղղությունները՝

1) ՓՄՁ սուբյեկտներին աջակցության համապատասխան ենթակառուցվածքների պահպանում և ամրապնդում

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ՓՄՁ զարգացմանը պետական աջակցության ծրագրերը հիմնականում իրականացնում են Արցախի ներդրումային հիմնադրամը (այսուհետ՝ ԱՆՀ) և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամը (այսուհետ՝ ԳԳԱՀ): Այս հիմնադրամների կայացումը ՓՄՁ զարգացմանը պետական աջակցության քաղաքականության կարևոր ձեռքբերումներից է:

Ծրագրի շրջանակներում աջակցություն կցուցաբերվի նշված կառույցների ամրապնդմանն ու գործունեության ընդլայնմանը:

2015 թվականին կշարունակի բարձրացվել ԱՆՀ և ԳԳԱՀ նյութատեխնիկական ապահովվածության մակարդակը, ինչպես նաև շարունակելու են իրականացվել աշխատանքները վերջիններիս աշխատակիցների մասնագիտական հմտությունների զարգացման և որակավորման բարձրացման ուղղությամբ:

Կշարունակեն նաև պարբերաբար կազմակերպվել քննարկումներ և հանդիպումներ գործող ՓՄՁ սուբյեկտների հետ, հատկապես Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջաններում՝ նրանց գործունեությանը խոչընդոտող հիմնախնդիրների հստակեցման և իրականացվող ծրագրերը դրանց լուծմանն ուղղելու նպատակով:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության գործունեության ծրագրով սահմանված ծրագրային միջոցառումների կատարման և պետություն-մասնավոր հատված համագործակցության ընդլայնման նպատակով աշխատանքներ կիրականացվեն մասնավոր հատվածի հետ համատեղ գործարար նախաձեռնությունների (գործարար ծրագրերի) մշակման և դրանց իրագործման ուղղությամբ:

2) ՓՄՁ սուբյեկտներին ֆինանսական և ներդրումային աջակցություն

ՓՄՁ-ի սուբյեկտների գործունեության զարգացման համար կարևոր խնդիր է հանդիսանում ֆինանսական (վարկային) ռեսուրսների հասանելիությունը: Այդ

նպատակով ՓՄՁ սուբյեկտներին ֆինանսական և ներդրումային աջակցության ցուցաբերման շրջանակներում կշարունակվի ՓՄՁ սուբյեկտներին ֆինանսական աջակցության, առևտրային բանկերի կողմից տրամադրված վարկերի տարեկան տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորման, վարկային երաշխավորությունների տրամադրման, կապիտալի ֆինանսավորման և արտադրական հզորությունների վերազինմանն աջակցության ծրագրերի իրականացումը:

Ծրագրերի շրջանակներում ապահովվելու է ֆինանսական ռեսուրսների հասանելիությունը ՓՄՁ սուբյեկտներին՝ վարկային միջոցների մատչելիության բարձրացման միջոցով: Այս ծրագրային ուղղությունը կենտրոնանալու է շրջաններում գրավի ապահովման խնդրի լուծման, ինչպես նաև ռիսկային և արդյունավետ նոր նախաձեռնությունների ֆինանսավորման ուղղությամբ: Բարձրացվելու է պետական ֆինանսական աջակցության արդյունավետությունը և նպատակայնությունը՝ հասցեականություն ապահովող գործիքների կիրառմամբ:

ա. ՓՄՁ սուբյեկտներին ֆինանսական աջակցություն

ՓՄՁ սուբյեկտների ֆինանսավորման (վարկավորման) հետ կապված հիմնախնդիրների հաղթահարման նպատակով ծրագրի շրջանակում, որպես ծրագրային միջոցառում, 2015 թվականին կշարունակվի ՓՄՁ սուբյեկտներին ֆինանսական աջակցության ծրագիրը: Այն նպատակաուղղված կլինի Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջաններում, հատկապես գյուղական բնակավայրերում, ՓՄՁ սուբյեկտների վարկավորման հնարավորությունների ընդլայնմանը՝ հիմնադրամների կողմից ռեսուրսների տրամադրման միջոցով:

Ֆինանսական աջակցության ծրագրի շրջանակում ՓՄՁ սուբյեկտներին ցուցաբերվում է ֆինանսական աջակցություն: Աջակցությունը ՓՄՁ սուբյեկտներին ԱՆՀ գործընկեր առևտրային բանկերի միջոցով ցուցաբերվում է տարեկան մինչև 10% տոկոսադրույքով և մինչև 5 տարի մարման ժամկետով վարկերի տրամադրմամբ:

բ. Առևտրային բանկերի կողմից ՓՄՁ սուբյեկտներին տրամադրված վարկերի տարեկան տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորում

ՓՄՁ սուբյեկտների վարկավորման հետ կապված հիմնախնդիրների հաղթահարման և վարկային ռեսուրսների մատչելիության ապահովման նպատակով 2015 թվականին կշարունակվի ՓՄՁ սուբյեկտներին տրամադրված վարկերի տարեկան տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորման ծրագիրը: Այն նպատակաուղղված կլինի հիմնականում զբոսաշրջության ոլորտում գործող, գյուղատնտեսական մթերքների արտադրությամբ, տեղական հումքի վերամշակմամբ զբաղվող, արտահանման ուղղվածություն ունեցող, ներմուծմանը փոխարինող տեղական արտադրատեսակներ արտադրող և տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառում ծառայություններ մատուցող տնտեսավարող սուբյեկտներին առևտրային բանկերի կողմից տրամադրվող վարկերի մատչելիության ապահովմանը:

Ծրագրի շրջանակներում ՓՄՁ սուբյեկտներին առևտրային բանկերի կողմից տրամադրված վարկերի տարեկան տոկոսադրույքները մասնակի կսուբսիդավորվեն ԱՆՀ և ԳԳԱՀ կողմից:

գ. ՓՄՁ սուբյեկտներին վարկային երաշխավորությունների տրամադրում

ՓՄՁ սուբյեկտների վարկավորման հետ կապված հիմնախնդիրների հաղթահարման և այդ ուղղությամբ նրանց համար վարկային ռեսուրսների

մատչելիության ապահովման նպատակով, որպես ֆինանսական աջակցության գործիք, ԳԳԱՀ կողմից 2015 թվականին կշարունակի իրականացվել գյուղատնտեսության ոլորտում գործող ՓՄՁ սուբյեկտներին վարկային երաշխավորությունների տրամադրման ծրագիրը: Այն նպատակաուղղված կլինի ՓՄՁ սուբյեկտներին վարկային երաշխավորությունների տրամադրման միջոցով գրավադրման խնդրի հաղթահարմանը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղական բնակավայրերում ՓՄՁ սուբյեկտների վարկավորման հնարավորությունների ընդլայնմանը:

Ծրագրի շրջանակներում տրամադրվող վարկային երաշխավորությունները գյուղատնտեսությամբ զբաղվող ՓՄՁ սուբյեկտներին հնարավորություն կընձեռեն վարկավորվել՝ գրավի անբավարարության և ցածր իրացվելիության պայմաններում:

դ. ՓՄՁ սուբյեկտների կապիտալի ֆինանսավորում

Կապիտալի ֆինանսավորման ցանկացած մեխանիզմ հնարավորություն է ընձեռում տնտեսավարող սուբյեկտներին խոշոր գործարար նախագծեր իրագործելու և կառավարելու նպատակով ներգրավել կապիտալ միջոցներ:

Արդյունաբերության ոլորտում լավագույն առաջարկների (գործարար ծրագրերի) կյանքի կոչման նպատակով ծրագրի շրջանակում նախատեսվում է ՓՄՁ սուբյեկտների ֆինանսավորում՝ փոխատվությամբ կամ կապիտալի որոշակի բաժնեմասի (փայամասնակցության) ձեռքբերմամբ՝ հետագա իրացման պայմանով: ՓՄՁ սուբյեկտների փոխատվությամբ կապիտալի ֆինանսավորումը իրականացվում է պայմանով, որ գործարար ծրագիրն իրականացվելու է ԱՆՀ անմիջական ուղղորդմամբ և հսկողությամբ:

Փոխատվության, ձեռքբերվող բաժնեմասի կամ փայաբաժնի չափը որոշվում է ԱՆՀ հոգաբարձուների խորհրդի կողմից՝ կոնկրետ ծրագրային առաջարկից ելնելով:

Սույն ծրագրի շրջանակում ՓՄՁ սուբյեկտների կապիտալի բաժնեմասերում ներդրումները կամ փայամասնակցության ձեռքբերումը հիմնվում է բաժնեմասի հաշվեկշռային կամ շուկայական գնի աճի և ձեռնարկատիրական շահույթից ակնկալվող շահութաբաժնի սկզբունքի վրա:

ՓՄՁ սուբյեկտների կապիտալի ֆինանսավորման կոնկրետ նախագծի իրագործման արդյունքում ծրագրային նպատակներին հասնելուց հետո նախատեսվում է բաժնեմասի վաճառք ուղղակի հրապարակային առաջարկի սկզբունքով կամ օրենքով չարգելված օտարման այլ ձևերով՝ ապահովելով ներդրված կապիտալի վերադարձը, որը կուղղվի նոր ծրագրերի ֆինանսավորմանը:

2015 թվականին ԱՆՀ ծրագրային միջոցառումների շրջանակներում կշարունակվեն նախկին Ղարմետաքսկոմբինատի տարածքում բիզնես միջավայր ստեղծելու համար աշխատանքները: Վերոնշյալ տարածքում նախատեսվում է ապահովել տեքստիլի արտադրությամբ զբաղվող գործող ընկերությունների գործունեությունը: Ծրագրի իրականացման արդյունքում աշխատողների թիվը կհասնի 500-ի:

ե. ՓՄՁ սուբյեկտների արտադրական հզորությունների վերազինման աջակցություն

Արտադրության (արտադրության սպասարկման) ոլորտում գործող և սկսնակ ՓՄՁ սուբյեկտների արտադրական հզորությունների վերազինման հետ կապված հիմնախնդիրների հաղթահարման և այդ ուղղությամբ ֆինանսական (վարկային) ռեսուրսների մատչելիության ապահովման նպատակով 2015 թվականին կշարունակվի

ՓՄՁ սուբյեկտների արտադրական հզորությունների վերազինմանն աջակցության ծրագիրը:

Ծրագրի իրականացումը Լեոնային Ղարաբաղի Հանրապետության արտադրության (արտադրության սպասարկման) ոլորտում գործող և սկսնակ ՓՄՁ սուբյեկտներին հնարավորություն կընձեռի երկարաժամկետ արտոնյալ վարկային միջոցներով ձեռք բերել ժամանակակից տեխնիկական միջոցներ, որոնց կիրառումը կբարձրացնի ՓՄՁ սուբյեկտների աշխատանքի արտադրողականությունը, թողարկվող արտադրանքի որակը, գործունեության արդյունավետությունը, մրցունակությունը:

Ծրագրի շրջանակում կիրականացվեն միջոցառումներ՝ ուղղված Լեոնային Ղարաբաղի Հանրապետության արտադրության (արտադրության սպասարկման) ոլորտում գործող ՓՄՁ սուբյեկտների կողմից տեխնիկական միջոցների նկատմամբ պահանջարկի ուսումնասիրմանը և դրան համապատասխան բավարարմանը:

Ծրագրի շրջանակում աջակցություն կցուցաբերվի նաև լիզինգային (ֆինանսական վարձակալության) ծառայություններից օգտվող արտադրության (արտադրության սպասարկման) ոլորտում գործող և սկսնակ ՓՄՁ սուբյեկտներին՝ լիզինգային վճարի մասնակի կամ լրիվ սուբսիդավորմամբ, կամ սահմանված այլ ձևերով:

3) ՓՄՁ սուբյեկտներում նորարարությունների և ժամանակակից տեխնոլոգիաների ներդրմանն աջակցություն

Տեղական արտադրանքի մրցունակության բարձրացման, ՓՄՁ սուբյեկտների կողմից գիտատեխնիկական արդյունքների արդյունավետ օգտագործման ու նրանց արտահանման ներուժի ընդլայնման տեսանկյունից կարևոր նշանակություն ունի ՓՄՁ սուբյեկտների մոտ նորարարությունների և ժամանակակից տեխնոլոգիաների ներդրումը:

ՓՄՁ սուբյեկտների մոտ նորարարությունների և ժամանակակից տեխնոլոգիաների ներդրմանն աջակցության ծրագրի շրջանակում իրականացվում են միջազգային առաջատար փորձի, նորարարությունների, նոր տեխնոլոգիաների և արտադրատեսակների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում, համակարգում և տրամադրում ՓՄՁ սուբյեկտներին, ՓՄՁ սուբյեկտների համակարգչային հագեցվածության մակարդակի ուսումնասիրում, նրանց մոտ համակարգչային տեխնիկայի, համակարգչային ծրագրերի ներդրմանն ու համացանցին միացմանն աջակցության ցուցաբերում:

Ծրագրի շրջանակներում 2015 թվականին նախատեսվում է աջակցել սկսնակ ձեռնարկությունների ձևավորմանն ու զարգացմանը, խթանել օտարերկրյա ուղղակի ներդրումներն այս ոլորտում, նպաստել տեղական կազմակերպությունների արդյունավետության բարձրացմանը, ինչպես նաև խթանել տեղեկատվական տեխնոլոգիաների արտադրանքի նկատմամբ տեղական պահանջարկի ձևավորումը և դրանց կիրառումը տնտեսության տարբեր բնագավառներում:

Ծրագրի շրջանակում ինչպես գործող, այնպես էլ սկսնակ ՓՄՁ սուբյեկտների կողմից իրատեսական նախաձեռնություններ ներկայացնելու պարագայում, վերջիններիս առևտրայինացման նպատակով նրանց կցուցաբերվի տեխնիկական աջակցություն:

4) ՓՄՁ սուբյեկտների կողմից թողարկվող արտադրանքի (մատուցվող ծառայությունների) արտահանմանն ու շուկաներում առաջնդմանն աջակցություն

Շուկայական տնտեսավարման պայմաններում թողարկվող արտադրանքը (մատուցվող ծառայությունները) պատշաճ մակարդակով շուկաներում առաջնդելը

արդյունավետ ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու հիմնական գրավականներից է:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ներկայումս առանձնակի կարևորվում է ՓՄՁ սուբյեկտների արտահանման ներուժի զարգացումը և արտաքին շուկաներ մուտք գործելու հնարավորությունների ընդլայնումը, ինչը կստեղծի լրացուցիչ հնարավորություններ վերջիններիս զարգացման համար՝ ապահովելով նշանակալի տնտեսական արդյունք:

2015 թվականին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արտահանման ներուժ ունեցող ՓՄՁ սուբյեկտներին աջակցություն կցուցաբերվի արտահանում սկսելու համար անհրաժեշտ կարողությունների ձևավորման, արտահանման գործունեության զարգացման և ընդլայնման ուղղությամբ: Այդ նպատակով արտահանման ներուժ ունեցող ՓՄՁ սուբյեկտներին կտրամադրվի տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն արտաքին շուկաներ մուտք գործելու համար անհրաժեշտ փորձարկումների անցկացման, թույլտվությունների, սերտիֆիկատների ձեռքբերման և համապատասխան այլ փաստաթղթերի պատրաստման հարցերում:

Ծրագրի շրջանակում համալիր աջակցություն կցուցաբերվի առանձին ոլորտներում գործող արտահանման մեծ ներուժ ունեցող առաջատար ընկերություններին՝ նրանց արտադրանքն արտաքին շուկաներում ներկայացնելու, պոտենցիալ գործընկերների որոնման և համագործակցության հաստատման հարցերում:

Սույն միջոցառման շրջանակում 2015 թվականին աջակցություն կցուցաբերվի ՓՄՁ սուբյեկտներում, հատկապես՝ թեթև արդյունաբերության ոլորտում գործող, որակի և անվտանգության կառավարման համակարգերի ներդրման (խորհրդատվություն կամ հավաստագրում) և գործողության (հիգիենիկ պայմանների բարելավում, տեխնոլոգիական վերազինում) ուղղությամբ՝ ըստ ՓՄՁ սուբյեկտների կողմից ներկայացված հայտերի:

Կշարունակվի աջակցությունը ՓՄՁ սուբյեկտներին Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում, Հայաստանի Հանրապետությունում և արտերկրում կազմակերպվող ցուցահանդեսներին մասնակցության ապահովման համար:

ՓՄՁ սուբյեկտների կողմից թողարկվող արտադրանքը (մատուցվող ծառայությունները) շուկայում ներկայացնելուն ուղղված աջակցությունը կիրականացվի նաև զանգվածային լրատվության միջոցներով լուսաբանման, ապրանքների փաթեթավորման, պիտակավորման, ձևավորման և այլ համապատասխան գործընթացների ուղղությամբ՝ ըստ ՓՄՁ սուբյեկտների կողմից ներկայացված հայտերի:

Բացի այդ, կիրականացվեն նաև համապատասխան միջոցառումներ էլեկտրոնային հաղորդակցության միջոցներով, մասնավորապես, ճանաչված ինտերնետային կայքերում ՓՄՁ սուբյեկտների և նրանց կողմից թողարկվող արտադրանքի (մատուցվող ծառայությունների) վերաբերյալ տեղեկատվության (մի քանի լեզուներով) տեղադրման ուղղությամբ:

Ծրագրի շրջանակում 2015 թվականին նախատեսվում է յուրաքանչյուր ՓՄՁ սուբյեկտին ցուցաբերել աջակցության անհատական մոտեցում: Մասնավորապես, ուսումնասիրելով արտահանման ներուժ ունեցող, հեռանկարային ՓՄՁ սուբյեկտների կարիքները արտադրանքի (ծառայության) գովազդման, ներկայացման, տեղեկատվության ստացման, գործընկերների որոնման և այլ ոլորտներում, ցուցաբերել համալիր աջակցություն կոնկրետ սուբյեկտին և նպաստել նրա կողմից թողարկվող արտադրանքի (ծառայության)՝ շուկայում ճանաչելիության բարձրացմանը:

2015 թվականին նախատեսվում է շարունակել իրականացնել տեղական արտադրանքի տեղական շուկաներում առաջնղման միջոցառումներ, մասնավորապես տեղեկատվական, գովազդային միջոցառումներ, լայնամասշտաբ քարոզարշավ, ինչպես նաև ֆինանսական և տեխնիկական աջակցություն՝ տեղական արտադրողներին և տեղական արտադրանքն իրացնող առևտրի ու հանրային սննդի սպասարկման օբյեկտներին:

5) ՓՄՁ սուբյեկտներին ուսուցողական, գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն

ա. ՓՄՁ սուբյեկտներին ուսուցողական աջակցություն

Միջազգային փորձը վկայում է, որ գործարար նախաձեռնություններից շատերի ձախողման պատճառները գրեթե նույնն են՝ փորձի, գործարար գիտելիքների ու հմտությունների պակասը, շուկայի վերաբերյալ տեղեկացվածության և կառավարման (հատկապես՝ ֆինանսների կառավարման գծով) ոչ բավարար մակարդակը, գործարար խորհրդատվության անմատչելիությունը և այլն:

Ծրագրի շրջանակներում գործարար հմտությունների զարգացման և գործարար գիտելիքների մակարդակի բարձրացման նպատակով համապատասխան ծառայություններ մատուցող կազմակերպությունների միջոցով ՓՄՁ սուբյեկտների համար կկազմակերպվեն մասնագիտական ուսուցման և վերապատրաստման դասընթացներ:

Նման դասընթացներին մասնակցությունը հնարավորություն կընձեռի սկսնակ գործարարներին ծանոթանալ ձեռնարկատիրական գործարարության հիմունքներին, իսկ գործող ՓՄՁ սուբյեկտներին՝ ստանալու պարզաբանումներ և ուղեցույցեր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությունում կատարվող փոփոխությունների, ֆինանսների, կառավարման, գործարար ու զարգացման ծրագրերի կազմման վերաբերյալ, ինչպես նաև ձեռք բերել համապատասխան մասնագիտական գիտելիքներ և նոր հմտություններ՝ կառավարման, շուկայավարման, գործարար էթիկայի, բանակցությունների վարման, վաճառքի հմտության և գործարարությանն առնչվող այլ բնագավառներում:

Աջակցություն կցուցաբերվի նաև սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտների հատուկ մասնագիտական ունակությունների և աշխատանքային հմտությունների կատարելագործման ուղղությամբ՝ դրանց վերաբերյալ համապատասխան հայտերի առկայության պարագայում:

Նման դասընթացների նկատմամբ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջաններում ՓՄՁ սուբյեկտների պահանջարկի բացահայտման նպատակով ԱՆՀ համայնքներում կկազմակերպի գործարար հանդիպումներ, հարցումներ, քննարկումներ:

2015 թվականի ընթացքում տնտեսական դաշտին առնչվող Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրության մեջ փոփոխություններ կատարվելու պարագայում, առանձին դեպքերում, կատարված փոփոխությունների ազդեցության և արդյունքների վերաբերյալ ՓՄՁ սուբյեկտներին իրազեկման և պարզաբանման նպատակով «բաց դռների» սկզբունքով կկազմակերպվեն ուսուցողական և խորհրդատվական բնույթի միջոցառումներ:

բ. ՓՄՁ սուբյեկտներին գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն

Ծրագրի շրջանակում սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտներին կցուցաբերվի գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն՝ տնտեսավարող սուբյեկտների պետական գրանցման, գործընկերների որոնման ու նրանց հետ գործարար կապերի հաստատման, ֆինանսական միջոցների ներգրավման և կառավարման, մտավոր սեփականության պաշտպանության, ստանդարտացման, համապատասխանության հավաստման, գործարար և ներդրումային ծրագրերի մշակման, ձեռնարկության տնտեսական գործունեության վերլուծության, շուկայական հետազոտությունների իրականացման, կառավարման և շուկայավարման, հաշվապահական հաշվառման, հաշվապահական (ֆինանսական) հաշվետվությունների կազմման ու ներկայացման, նորարարությունների կիրառման և ժամանակակից տեխնոլոգիաների առևտրայնացման, իրավաբանական, հարկային ու մաքսային ձևակերպումների և այլ կարևոր ուղղություններով՝ ըստ ՓՄՁ սուբյեկտների կողմից ներկայացված հայտերի:

2015 թվականին ԱՆՀ կշարունակի իրականացրել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գերատեսչական նորմատիվ ակտերի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտոնական տեղեկագրերի հիման վրա գործարարությանն առնչվող օրենսդրական դաշտում կատարված փոփոխությունների վերաբերյալ ամփոփ տեղեկատվական նյութերի պատրաստման աշխատանքները: Սկսնակ գործարարների շրջանում հարկային դաշտի մասին իրազեկվածության աստիճանի բարձրացման նպատակով կմշակվեն և կտրամադրվեն հարկային ուղեցույցեր:

Ծրագրով նախատեսվում է նաև տեղեկատվական ու վերլուծական նյութերի (մասնագիտական և տեղեկատվական բնույթի գործարար ուղեցույցների, բրոշյուրների, տեղեկագրերի) հրատարակում, որոնք անվճար կտրամադրվեն ՓՄՁ սուբյեկտներին և բիզնեսին աջակցող կազմակերպություններին, ինչպես նաև կտեղադրվեն ԱՆՀ ինտերնետային էջում: Զանգվածային լրատվամիջոցներով կապահովվի համապատասխան տեղեկատվությունը ԱՆՀ և ԳԳԱՀ կողմից ցուցաբերվող աջակցության ուղղությունների (ծրագրերի) մասին:

2015 թվականի ընթացքում կշարունակեն աշխատանքներ իրականացվել նեղ մասնագիտական հմտություններ պահանջող խորհրդատվական աջակցության ծրագրերի իրականացման, ինչպես նաև ՓՄՁ սուբյեկտների համար գործարար խորհրդատվական ծառայությունների մատուցման մատչելիության ապահովման ուղղությամբ: Այդ նպատակով ԱՆՀ կողմից աջակցություն կցուցաբերվի ՓՄՁ սուբյեկտներին՝ մրցութային կարգով ընտրված մասնագիտացված գործարար ծառայություններ մատուցող կազմակերպությունների միջոցով ՓՄՁ սուբյեկտներին որակյալ գործարար խորհրդատվության տրամադրման ճանապարհով:

Գործարարների մոտ առաջացող խնդիրները՝ կապված հաշվապահական հաշվառման, հարկային փաստաթղթաշրջանառության և վարչարարության հետ, ինչպես նաև վարչական իրավախախտումների արդյունքում վճարված տույժերի և տուգանքների գերակշիռ մասը պայմանավորված են ՓՄՁ սուբյեկտներում փորձառու հաշվապահների՝ հաշվապահական հաշվառում վարելու հմտությունների պակասով: Միաժամանակ, այն կազմակերպությունները, որոնք ցանկանում են դիմել մասնագետների խորհրդատվությանը, հաճախ բարդություններ են ունենում՝ պայմանավորված մի շարք հանգամանքներով. գործարար ծառայություններ մատուցող կազմակերպությունների վերաբերյալ տեղեկատվության պակաս, գործարարների և գործարար ծառայություններ

մատուցող կազմակերպությունների միջև պայմանագրային հարաբերությունների ոչ հստակություն:

Վերը նշված խնդիրները հաղթահարելու նպատակով ծրագրի շրջանակում կգործարկվի հաշվապահական ծառայություններ մատուցող կազմակերպությունների կողմից ՓՄՁ սուբյեկտներին մատուցվող ծառայությունների արժեքի համաֆինանսավորման ծրագիրը: Սույն ծրագրի շրջանակում նախատեսվում է մեկ տարվա կտրվածքով աջակցություն ցուցաբերել ՓՄՁ սուբյեկտներին՝ համաֆինանսավորելով գործարար ծառայություններ մատուցող կազմակերպությունների կողմից նրանց մատուցվող ծառայությունների արժեքը: Մատուցվող ծառայությունների շրջանակը կընդգրկի ՓՄՁ սուբյեկտներում հաշվապահական հաշվառման վարումը, հարկային հաշվետվությունների կազմումը, հարկային խորհրդատվությունը, դատարանում ՓՄՁ սուբյեկտների շահերի պաշտպանությունը, ինչպես նաև հարկային համակարգին առնչվող այլ ուղղություններ:

Դրա հետ մեկտեղ կիրականացվեն միջոցառումներ խորհրդատվական աջակցության ծրագրերն առավել նպատակային և արդյունավետ դարձնելու ուղղությամբ, հատկապես Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջաններում: Կընդլայնվի գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցության տարածաշրջանային ընդգրկվածությունը՝ ներգրավելով շրջաններում և մասնավորապես՝ գյուղական բնակավայրերում գործող ՓՄՁ սուբյեկտներին և սկսնակ գործարարներին:

ԱՆՀ կհամագործակցի նաև գործարար համայնքը ներկայացնող միությունների և հասարակական կազմակերպությունների, տեղական ինքնակառավարման մարմինների հետ, ինչը հնարավորություն կտա իրականացվող աջակցության ծրագրերում ներգրավել ՓՄՁ սուբյեկտների լայն շրջանակ:

6. ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

ՓՄՁ պետական աջակցության 2015 թվականի ծրագրի ֆինանսավորումը կիրականացվի Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեով ԱՆՀ և ԳԳԱՀ աջակցման համար նախատեսված, ՓՄՁ պետական աջակցության 2005-2014 թվականների տարեկան ծրագրերի շրջանակներում նշված կառույցների կողմից տրամադրված փոխառությունների մարումներից ստացված, ինչպես նաև նրանց կողմից՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ չարգելվող աղբյուրներից ներգրավված ֆինանսական միջոցների հաշվին:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵԿԱՎԱՐ**

Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ